ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան

22.01.2026թ.

Կայացավ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ ԱԱՏՄ) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) հերթական նիստը:

Մասնակցել են՝

Ա. Ավանեսյան	- ՀՀ առողջապահության նախարար
Ժ. Խառատյան	- ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ
Օ. Աբրահամյան	- ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Վ. Սիրունյան	- ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Տ. Քեյան	- «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպության աջակցության ծրագրերի ղեկավար
Շ. Դանիելյան	- Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի (ԵՊԲՀ) աշխատակազմի ղեկավար
Հ. Լիլոզյան	- Հայաստանի ամերիկյան համալսարանի Ջերալդ և Փաթրիշա Թրփանճեան առողջապահական գիտությունների ֆակուլտետի գիտաշխատող
Ս. Սարգսյան	- ԱԱՏՄ ղեկավար
Գ. Հովհաննիսյան	- ԱԱՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ (Խորհրդի քարտուղար)
Ա. Դավթյան	- ԱԱՏՄ որակի ապահովման վարչության պետ

Չեն մասնակցել՝

Լ. Քոչարյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ (նիստը վարող)
Ա. Խոջոյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Օրակարգի հարցեր.

1. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2025 թվականի տարեկան հաշվետվության նախագծի քննարկում և հավանության արժանացում.
2. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2025 թվականի 4-րդ եռամսյակի հաշվետվության ներկայացում և քննարկում.
3. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2025 թվականի 4-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատման քննարկում և հաստատում.
4. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի անդամ՝ Հայաստանի ամերիկյան համալսարանի Ջերալդ և Փաթրիշա Թրփանճեան առողջապահական գիտությունների ֆակուլտետի գիտաշխատող Հրաչյա Լիլոզյանի անդամության ժամկետը երկարաձգելու [illegible]

5. Այլ հարցերի քննարկում:

Ա. Ավանեսյանը առաջարկեց հաստատել օրակարգը:

Խորհրդի անդամների միաձայն քվեարկությամբ (7 կողմ) օրակարգը հաստատվեց:

1. Քննարկվեցին օրակարգի 1-ին հարցը

Ս. Սարգսյանը ներկայացրեց 2025 թվականին ԱԱՏՄ-ի կողմից կատարված աշխատանքները: Ներակայացրեց հրապարակված ստուգումների և վերստուգումների հանձնարարագրերի քանակի, իրականացված վարչական վարույթների քանակի և դրանց հիմքերի, ինչպես նաև արդյունքների մասին: Ներկայացրեց ԱԱՏՄ վերահսկողության ոլորտներում առկա խնդիրները և ռիսկերը, ինչպես նաև իրականացված կանխարգելիչ միջոցառումները՝ սեմինարներ, խորհրդատվություններ, այցելություններ բնակավայրեր, թեժ գծով ստացված զանգերի պատասխաններ: Նաև նշեց ստացված վարչական և դատական բողոքաքների և դրանց արդյունքների մասին:

2. Քննարկվեց օրակարգի 2-3-րդ հարցերը

Ա. Դավթյանը ներկայացրեց ԱԱՏՄ Որակի ապահովման վարչության 2025 թվականի 4-րդ եռամսյակի հաշվետվությունը հիմք ընդունելով ներքին հսկողության արդյունքները: Նշեց ներքին կարգապահական կանոնների խախտումների, ստացված վարչական և դատական գործերի, դրանք արդյունքների, դատական կարգով արձանագրված խնդիրների, ԱԱՏՄ գործունեության ընթացքում բացահայտված խնդիրների և ռիսկերի մասին, ինչպես նաև ներկայացրեց 2025 թվականի 4-րդ եռամսյակի և տարեկան կատարողական գնահատականը:

Ա. Ավանեսյանը հարցրեց տարվա ընթացքում առաջնահերթությունների և թիարխների առկայության և դրանց հասնելու արդյունքի մասին:

Ս. Սարգսյանը պատասխանեց, որ օրինակ ըստ դատական գործերի վերլուծության որոշ դեպքերում խնդիր էր առաջանում ԱԱՏՄ-ի կողմից հարուցվող վարչական վարույթների իրավաչափության հետ կապված, սակայն այս տարի հիմք ընդունելով Խորհրդում քննարկված արդյունքները իրականացվելու են ստուգումներ ինչը լուծում է նշված հարցը, երկրորդը դա աշխատանքային վեճեր քննելու իրավաչափության հետ կապված հարցն էր, ինչով պայմանավորված որոշ դեպքերում ստացված դիմումները հետ են վերադարձվելու հասցեատիրոջը՝ դատարան դիմելու նպատակով:

Ա. Ավանեսյանը հարցրեց նաև հաստիքների համալվածության վերաբերյալ:

Ս. Սարգսյանը պատասխանեց, որ գործընթացը դեռ ընթացքի մեջ է, ոչ բոլոր հաստիքներն են համալրված:

Ժ. Խառատյանը հարցրեց ԱԱՏՄ-ին վերապահված անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտի վերահսկողության շրջանակներում ինչ համալրվածություն է առկա:

Ս. Սարգսյանը պատասխանեց, որ դեռ համալրվածություն չկա, սակայն այս ընթացքում հաստատվել է նշյալ ոլորտում դիտարկումներ իրականացնելու ռիսկի վրա հիմնված մեթոդաբանությունը և ստուգաթերթերը: Տարեկան դիտարկումների ծրագիրը հաստատվելուց նաև հնարավորինս սեղմ ժամկետում կսկսվի համալրվածության գործընթացը:

Ա. Ավանեսյանը անդրադառնալով ԱԱՏՄ-ի կողմից վերահսկողության շրջանակներում պոլիկլինիկաներից պահանջվող բժշկական փաստաթղթերի

նշելով, որ ԱԱՏՄ-ի կողմից պահանջվում է այդ փաստաթղթերի փաստաթղթային և էլեկտրոնային տարբերակները միաժամանակ, սակայն ինչի շրջանակներում այդ գործընթացը ավելի է բարդանում, քանի որ բացի էլեկտրոնայինից պոլիկլինիկաները նաև ստիպված լրացնում են փաստաթղթային տարբերակները, ինչը լրացուցիչ ժամանակ է պահանջում: Առաջարկեց վերանայել ստուգումների ստուգաթերթերում առկա հարցերը:

2. Քննարկվեց օրակարգի 4-րդ հարցը

Առաջարկվեց Խորհրդի անդամ՝ Հայաստանի ամերիկյան համալսարանի Ջերալդ և Փաթրիշա Թրփանճեան առողջապահական գիտությունների ֆակուլտետի գիտաշխատող Հրաչյա Լիլոզյանի անդամության ժամկետը երկարաձգել:

Ա. Ավանեսյանը առաջարկեց քվեարկել:

Խորհրդի անդամները օրակարգի բոլոր հարցերին միաձայն քվեարկեցին կողմ (7 կողմ):

Որոշվեց.

1. Հավանություն տալ ԱԱՏՄ 2025 թվականի տարեկան հաշվետվությանը:
2. Հաստատել ԱԱՏՄ 2025 թվականի 4-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:
3. Ընդունել ի գիտություն ԱԱՏՄ որակի ապահովման վարչության 2025 թվականի 4-րդ եռամսյակի հաշվետվությունը:
4. Երկարաձգել Խորհրդի անդամ՝ Հրաչյա Լիլոզյանի անդամության ժամկետը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ